ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«27» մայիսի 2024թ. № 034/27- 1817

«ԱՆԴՐԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՆ
Հասցե՝ ք.Երևան, Նոր Արեշ 20/63
էլ. փոստ andraelectrocars2023@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԼՄՍՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/12 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքում Սպիտակի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ԱՆԴՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև կնքվել է պահմանագիր, որի համաձայն Վաճառողը պարտավոր է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով սահմանված մեքենան (այսուհետ՝ Ապրանք):

Պայմանագրի 8.1-ին կետի համաձայն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Հաշվի առնելով, որ Գնորդի կողմից պայմանագիրն ստորագրվել է 2024 թվականի ապրիլի 16-ին՝ ուստի պայմանագիրն ուժի մեջ է մտել նշված ժամկետում:

Տվյալ պարագայում Վաճառողը պարտավոր էր 2024 թվականի մայիսի 16-ը ներառյալ Գնորդին մատակարարել Ապրանքը, սակայն չի կատարել իր ստանձնած պարտավորությունը:

Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 21-ի թիվ 034/27-1770 գրությամբ Վաճառողին առաջարկվել է 27.05.2024 թվականը ներառյալ կատարել

պայմանագրով սահմանված պարտավորությունները, սակայն Վաճառողը նոր ժամկետում ևս չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Վաճառողը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Սպիտակի համայնքապետարանը միակողմանի լուծում է «ԱՆԴՐԱ» ՍՊԸ-ի հետ 2024 թվականի ապրիլի 16-ին կնքված ՀՀ ԼՄՍՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/12 ծածկագրով պայմանագիրը:

«ԱՆԴՐԱ» ՍՊԸ-ին, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Կատ.՝ Ալբերտ Բաբայան
հեռ. (095) 92-10-02